

**ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԱՔԳԱՐ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ  
ԸՆՏՐԵԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՅԱՅՈՑ ԹԵՄԻՆ**

Մայիս 30-31, 2014-ին, հիւրընկալութեամբ Միսիսոկայի Սբ. Վարդան Եկեղեցւոյ, գումարուեցաւ Գանատահայոց Թեմի 31-րդ Պատգամաւորական Ժողովը, նախագահութեամբ Գանատահայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ Բարձրաշնորհ Տ. Նաթան Արք. Յովհաննիսեանի: Ժողովի ատենապետն էր Պրն. Ժաք Ստեփանեան:

Առաջնորդարանի յարակից մարմիններու, Հոգեւորականաց եւ Թեմական Խորհուրդի տարեկան տեղեկագիրներու ներկայացումէն եւ վաւերացումէն ետք, տեղի ունեցաւ նոր առաջնորդի ընտրութիւնը: Առ այդ, ձայներու մեծամասնութեամբ առաջնորդ ընտրուեցաւ Հոգեշնորհ Տ. Աբգար Վրդ. Յովակիմեան, որ 2011 թուականէն ի վեր ձեռնհասօրէն կը վարէր Պուլկարահայ Թեմի Առաջնորդական Տեղապահի պաշտօնը:

Թեկնածուներու եռանուն ցանկի միւս հոգեւորականներն էին՝ Հոգշ. Տ. Սասուն Ծ. Վրդ. Զմրուխտեան եւ Հոգշ. Տ. Առէն Վրդ. Շահիմեան:

Ընտրութենէն անմիջապէս յետոյ, Հոգեշնորհ Հայր Սուրբը *Հրաշափառ* շարականի երգեցողութեամբ, Հոգեւորականաց Դասու անդամներով եւ հանդիսապետութեամբ Առաջնորդական Տեղապահ Գերշ. Տէր Նաթան Արք. Յովհաննիսեանի մուտք գործեց Եկեղեցի:

Նորընտիր Առաջնորդը երախտագիտական աղօթք բարձրացուց առ Աստուած, ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորներուն իրեն վստահուած այս բարձր պատուի ու ծառայութեան համար:

Յունիս 9, 2014-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական գիրով հաստատեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Պուլկարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Աբգար վարդապետ Յովակիմեանի ընտրութիւնը Գանատայի հայոց թեմի առաջնորդի պաշտօնին:

\*\*\*

Տ. Աբգար վարդապետ Յովակիմեանը (ավագանի անունով՝ Սամուէլ) ծնած է 1972 թ. Յունիսի 23-ին, Վրաստանի Պաթումի քաղաքին մէջ:  
1979-1989 տարիներուն ուսանած է աւարտած է Պաթումիի հայկական Ստեփան Շահումեանի անուան միջնակարգ դպրոցը:  
1989-1995 տարիներուն ուսանած է Էջմիածնի Գեորգյան Հոգևոր ճեմարանէն ներս:  
Աւարտաճառը պաշտպանած է ,Հայ դաւանաբանական միտքի արձագանքները Ս. Ներսէս Շնորհալիի Մատթէի մեկնութեան մէջէ թեմայով:  
1995 թ. Հոկտեմբերին ձեռնարկ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջեանի ձեռնադրուած է սարկաւազ և ծառայութեան կոչուած Մայր Աթոռի մէջ:  
1996 թ. Յունիսի 2-ին ձեռնարկ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճէմեանի ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանութեան շարքերը:  
1996-2001 տարիներուն ծառայած է որպէս Աճարիայի (Վրաստան) հոգևոր հովիւ:  
2001-2004 տարիներուն ուսանած է Զալցբուրկի համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետէն ներս:  
2004 թ. պաշտպանած է ,Հայ-լատին Եկեղեցական յարաբերութիւնները 11-12-րդ դարերուն թեմայով աւարտաճառը և վերոնշեալ համալսարանէն ստացած աստուածաբանութեան Մագիստրոսի կոչում:  
2004 թ. Մայիսէն 2005 թ. Հոկտեմբեր ամիսներուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ ծառայած է Վիրահայոց թեմէն ներս՝ որպէս փոխառաջնորդ:

2005 թ. հոկտեմբերի 11-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ նշանակուած է Սիւնեաց թեմի փոխառաջնորդ:

2006 թ. ապրիլին պաշտպանած է վարդապետական թեզը ,Ս. Դիոնիսիոս Արիսպագացին հայ մատենագրութեան մէջ թեմայով և 2006 թ. Մայիսին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցւոյ մէջ ձեռամբ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսեանի ստացած մասնաւոր վարդապետութեան աստիճան:

2010 թ. մէկամեայ ուսման է մեկնած է Գանատա:

2011 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ նշանակուած է Պուլկարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ:

Հոգեշնորհ Հայր Սուրբը կը տիրապետէ հայերէն, ռուսերէն, վրացերէն և գերմաներէն լեզուներուն: